բոլորի համար էլ հիմք է ծառայել Էջմիածնայ (հնումն Յովհաննու վանաց) հին օրինակն։

—Մովսէսի Կաղանկայտուացւոյ Աղուանից պատմութեան օտարալեզու թարգմանութեանց մասին ուրիշ անգամ։

Կը շարունակուի.

Խաչիկ Վ.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ·

—

*Բազմարգոյ Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ·*

Երբեւ մի նոր գիւտ, մի նոր զարդ յանձնելով խմբագրութեանդ այս եօթն տող բեւեռաձեւ արձանագրութեան օրինակը՝ յայտնում եմ, թէ 1862 թուից ցայսօր առաջին անգամն եմ պատահում ագիւսի վերայ գրուածի մի արձանագրութեան։ Այս արձանագրութիւնը գտնուել է Արմաւիրում աշխատութեամբ Արժ. Յովհաննէս քահանայի Տ. Յակոբեան Մոլլաբայազիտցու այս 1895 թուին, բայց ափսոս որ՝ կիսով չափ կոտրուած է ագիւսը. ուստի և գրուածը չէ կարդացւում, որոյ համար մտադիր եմ Աստուծով առաջիկայ ամսին գնալ Արմաւիր, որոնել գտնել ագիւսի կէս մասը և գուցէ ուրիշ այդպիսիք եւս։

Արձանագրի առաջին տողն համարեա միւս շատ արձանագրութեանց առաջին տողին նման է, միայն առաջին բառի մի գիծը պակաս է, զորօրինակ, արձանագրերի մեծ մասը սկսւում է այսպէս,  · իսկ այս արձանագրինը այսպէս, ։ Նորանշան բառեր այս կէս մասն արձանագրութեան մէջերեւում են երեք հատ. զորօրինակ.

5-րդ տողի 4-րդ բառը՝ որ է .

6-րդ տողի 4-րդ բառը՝ որ է .

և 7-րդ տողի 5-րդ բառը՝ որ է 

Կէս ագիւսի երկայնութիւնն է 5½ վերշոկ և լայնութիւնն 4 վերշոկ. իսկ թանձրութիւնն մի վերշոկ։

Արձանագիրս բերելու համար յատկապէս ուղարկեցի ուսուցիչ պ. Շմաւոն Շահպունունի, որպէս զի անվնաս բերէ ագիւսը և միւս կէս մասի գտնելու համար Արմաւրայ քահանայից հետ խօսէ, որք մօտ լինելով բլրին հնար ունին միշտ որոնել տալու։ Հրահանգութեանս համաձայն փափաքելով պ. Շահպունունին ագիւսը բերեց, որ այժմ գրասեղանիս վերայ դրած սպասում եմ կէս կորուսեալ մասին, որ ամբողջացրած ընծայեմ Ս. Էջմիածնի թանգարանին։

ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

30-ն Յուլիսի
1895 ամի.
ի. Ս. Էջմիածին։

## ԱՐՄԱՒԻՐԻ ԺԱ· ԱՐՁԱՆԱԳԻՐՆ ԱՂԻՒՍԻ ՎԵՐԱՅ· 1895։ № 21

